

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (71)
2016 թ.

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝
[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 7 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
4.04.2016
Հանձնված է տպագրության
18.04.2016

СОЮЗ ЮРИСТОВ РА
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (71)

2016 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 04.04.2016
Подписано к печати 18.04.2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վիկտորյա Օհանյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ..... 5

Ալվարո Ալեքսանյան

ՄԵՍՐՈՊ ԹԱՐԻԱՂՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 15

Կարեն Ամիրջյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 22

Անահիտ Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՅԱՑՈՒՄԸ..... 35

Նելլի Հովսեփյան

XIX ԴԱՐԻ ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ՄԱՍԻՆ 42

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարդան Այվազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ 52

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գուրգեն Մեղոյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՐԳՈՎԱԾՈՒԹՅԱՄԲ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ..... 60

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գոհար Հակոբյան

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ
ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱՋՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԻՆՉՆ Է ԵՆԹԱԿԱ
ՓՈՓՈՒՆՈՒԹՅԱՆ..... 68

Գոռ Միրզոյան

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՇԱՐԺՆԹԱՑԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 76

Լալա Գրիգորյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ..... 87

Հռիփսիմե Խաչատրյան

ԱՆՁԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱԿՈՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 95

Էդգար Կարապետյան

ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱԽՍԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ
ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 103

Լաուրա Ջոհրաբյան

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԾԱԳՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 114

Աննա Ղարսյան

ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ
ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԼԵԶԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ 120

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Վարդան Այվազյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Սույն վերլուծական հոդվածը նախատեսված է առանձնացնելու մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) ֆենոմենոլոգիան, գործառնական առաքելությունը և գործառնավորման կառուցակարգը բացահայտող հիմնական թեզիսները:

Այն շատ կարևոր է միասնական օբյեկտիվ ձևաչափում մարդու իրավունքների հիմնախնդրային ոլորտի ընկալման համար, որը չպետք է սահմանափակվի այդ ոլորտին առնչվող որոշումներ կայացնող անձանց սուբյեկտիվ պատկերումներով:

Մեր կողմից առաջարկվում է նաև Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների ինստիտուտի՝ որպես ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասի ձևավորման և կայացման մոտեցումն ու հայեցակարգի հիմնական ուրվագծերը:

Օմբուդսմենի ինստիտուտի անարդյունավետության և անկատարության հիմնական պատճառները պայմանավորված են նրանով, որ վերջինիս գործառնական առաքելությունը բխեցվում է տեխնիկական սահմանումից, առանց դրա իմաստի և մարդու իրավունքների իրավական կարգավորման նպատակի պատշաճ իրավական հիմնավորման: Այսպես, Համաշխարհային հանրագիտարանում (1972 թ.) ամրագրված է օմբուդսմենի հետևյալ սահմանումը, «Օմբուդսմենը» անկախ հասարակական պաշտոնատար անձ է, որը հետաքննում է կառավարման մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ քաղաքացիների բողոքները: Նրա աշխատանքի էական մասը կազմում է ոստիկանության, դատախազության պաշտոնյաների, դատավորների կողմից անարդար և կոպիտ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների հետաքննությունը, որոնք առնչվում են բնակարանային, հարկային, բարեգործության, ընտրություններին մասնակցության գործերին: Բողոքի հետաքննությունից հետո օմբուդսմենը կարող է հիմնավորմամբ մերժել բողոքը կամ միջոցներ փնտրել շտկելու իրավիճակը համոզման, գործը հանրությանը հանձնելու միջոցով կամ շատ հազվադեպ դեպքերում միջնորդել պատասխանատվության ենթարկելու մեղավոր պաշտոնատար անձին¹:

Իրավաբանական գրականության Օմբուդսմենի ինստիտուտի մեկ այլ համառոտ սահմանման համաձայն՝ (շվեդերեն ombudsman բառից) որոշ երկրներում խորհրդարանի հատուկ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական մարմինների գործունեության օրինականությանը և մարդու իրավունքների ու ազատությունների իրականացմանը²: Իրավաբանների միջազգային ընկերակցության կողմից տրված սահմանման համաձայն՝ *Օմբուդսմենը պետության Սահմանադրությամբ*

¹ St'u The World Book Encyclopedia. Field Enterprise as Educational Corporation. /Holbert N. Corrol. N.Y.. 1972, V 14, էջ 574:

² St'u Тихомирова Л.В., Тихомиров М.Ю., Юридикическая энциклопедия, М., 1997, էջ 287:

կամ օրենսդիր իշխանության մարմնի ակտով նախատեսված ծառայություն է, որը ղեկավարվում է բարձրաստիճան անկախ պաշտոնատար անձի կողմից, որը պատասխանատու է օրենսդիր իշխանության առջև, բողոքներ է ստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնյաների կողմից տուժած անձանցից, գործում է սեփական հայեցողությամբ և իրավասու է կատարել հետաքննություն, պետական մարմիններին առաջարկել վերացնելու թույլ տրված իրավախախտումները և այդ կապակցությամբ զեկույցներ ներկայացնել օրենսդիր իշխանության մարմնին¹:

Կամ՝ Օմբուդսմենը պաշտոնատար անձ է, որը այդ պաշտոնին նշանակվում է նախարարությունների, գերատեսչությունների և այլ կառավարական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: Նա գործում է ինչպես քաղաքացիների բողոքների հիման վրա, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ և ղեկավարվում է ոչ միայն օրենսդրությամբ, այլև արդարությամբ²: Իսկ 2005 թ.-ի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխան դրույթի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու **խախտված իրավունքների և ազատությունների** պաշտպանությունը³:

Ինչպես երևում է վերոնշյալ հիմնարար բնույթ ունեցող տեխնիկական սահմանումներից, դրանցում չեն ամրագրվում մարդու իրավունքների իրավական բնույթը, մարդու իրավունքների՝ որպես իրավական օբյեկտի, բովանդակային հատկանիշների հայեցակարգային մոդելը, մարդու իրավունքների պաշտպանության օպերացիոն կանոնակարգն ու գործառնական կառուցակարգը:

Այս պարագայում սահմանվում են մարդու իրավունքների պաշտպանի կողմից այն հարցերի լուծման իրավաբանական լիազորությունները, որոնք վերաբերում են պաշտոնատար անձանց կողմից իրենց դիրքի չարաշահմանը կամ պարտականությունների չկատարմանը, որի արդյունքում քաղաքացու և իշխանությունների միջև ծագում են վեճեր:

Օմբուդսմենի ինստիտուտն այսօր գործում է աշխարհի մի քանի տասնյակ երկրներում, չնայած դրանցից յուրաքանչյուրում այն ունի տարբեր իրավական կարգավիճակ, իրավասություն և հնարավորություններ: Այդ ինստիտուտի ազգային առանձնահատկությունների և բազմաձևության պայմաններում բոլոր երկրներում էլ ընդհանուրն այն է, որ օմբուդսմենը բնակչությունից ստանում է բողոքներ պետական մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով իրենց իրավունքների և ազատությունների խախտման կապակցությամբ, քննում է այդ բողոքները և տալիս համապատասխան եզրակացություններ⁴: Ասվածը վկայում է, որ բոլոր երկրների հիմնական օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում նույնպես Օմբուդսմենի սահմանումը կրում է տեխնիկական բնույթ և չի արտացոլում վերջինիս էությունն ու համակարգային բնույթը:

¹ **Бойцова В. В.** Служба защиты прав человека и гражданина, Мировой опыт, Изд БЕК, Москва, 1996. стр VI.

² Տե՛ս <http://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/295994>

³ Տե՛ս 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 83.1 հոդվածը, ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում, Հոդ. 1426:

⁴ Մանրամասն տե՛ս **Ավագյան Վ.** Մարդու իրավունքներ, ուսումնական ձեռնարկ բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2014 թ., էջ 306:

Առանց մարդու իրավունքների, այնպես էլ սահմանադրաիրավական կարգավորման համակարգում դրանց պաշտպանության հայեցակարգային մոդելի, վերը նշված սահմանումները փոխարինվում են ընդամենը Օմբուդսմենի խնդիրների թվարկմամբ, առանց գործառնական կապվածության և որպես կանոն ընդհանուր գծերով:

Մինչդեռ անկախ պաշտոնավարման երկրից՝ Օմբուդսմենի հիմնական գործառույթներն են.

- Խախտված իրավունքների պաշտպանությունն ու արդարության վերականգնումը,
- Մարդու իրավունքների ոլորտում միջազգային հարաբերությունների զարգացմանն ուղղված գործունեության ծավալումը,
- Իրենց իրավունքների վերաբերյալ քաղաքացիների լուսավորումը,
- Մարդու և քաղաքացու իրավունքներին առնչվող օրենսդրության կատարելագործման աջակցությունը,
- Պետական կառույցների նկատմամբ վերահսկողությունը:

Նման մոտեցումը լիարժեք իրավական կարգավորման առումով կարող է հանգեցնել մի շարք թերությունների: Մասնավորապես.

- Մարդու իրավունքների հիմնախնդիրը սահմանափակվում է դրանց խախտման կամ ոտնահարման առանձին դրվագների նեղ ընկալմամբ, որտեղ հիմնական շեշտադրումը կատարվում է ոտնահարման փաստի՝ որպես հասարակական և քաղաքական ուշադրության օբյեկտի ինքնանպատակ առանձնացմամբ, որն անպատճառ լուծում է պահանջում, սակայն իրավական համակարգի տեսակետից չի բացահայտում մարդու իրավունքների խախտումների առաջացման և ի հայտ գալու հիմնարար սկզբնապատճառները: Դրա հետևանքով Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ծառայության գործառնական դրսևորումը տեղափոխվում է դրանց ոտնահարման առանձին դեպքերի սերվիսային սպասարկման հարթություն՝ զուգահեռաբար իրականացվող օպերացիոն դատարարության ռեժիմով:

- Հակամարտությունների վերացման հարցերով որոշումների ընդունման սուբյեկտիվ կառուցակարգը փոխարինում է «Մարդու իրավունքների բոլոր խախտումները պետք վերացնել համակարգային մակարդակում և իրավական կարգավորման համակարգային կառուցակարգով՝ բացահայտելով պատճառահետևանքային կառուցակարգը» սկզբունքով:

- Արդարության սուբյեկտիվ ընկալման հիման վրա իրավակիրառումը որպես կանոն պարփակվում է Օմբուդսմենի գրասենյակի սահմանափակ տարածությունում՝ արդարադատություն իրականացնող մարմինների հետ փոխգործակցության հնարավոր բարդացումներով:

- Մեծանում են հասարակական գործընթացներին քաղաքական և այլ կոնյունկտուրաների ներգրավման հավանականությունը, Օմբուդսմենի անկախության սահմանադրական կարգավիճակի վարկաբեկման հնարավորությունը:

Համակարգային մակարդակում հիմնախնդրի հաղթահարման համար անհրաժեշտ է վերաիմաստավորել օմբուդսմենի ինստիտուտը և համալրել հայեցակարգային հետևյալ ասպեկտներով:

Մարդու իրավունքների սահմանադրական բնույթը անհրաժեշտ է համապատասխանեցնել միջազգային իրավունքի համակարգին, որը հնարավորություն կընձեռի ներդաշնակորեն ինտեգրվել համաշխարհային հանրությանը:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը ցանկացած իրավական և քաղաքացիական հասարակության գործառնավորման համար համարվում է առանցքային և կարևոր նախապայաման: Ավելին, մարդու իրավունքները ցանկացած պետականության և հասարակության կառուցվածքի սահմանադրաիրավական ամրագրման հիմքն են, որոնց գործառնավորումը հիմնվում է իրավունքի գերակայության և կիրառման սկզբունքի վրա:

Սա սահմանադրաիրավական կարգավորման առջև դրված առաջնահերթ խնդիր է, որի շրջանակներում մարդու իրավունքները պետք է ներդաշնակորեն համադրվեն ցանկացած օրենսդրական և նորմատիվ ակտի հետ՝ ոչ միայն ազգային իրավական համակարգի ձևաչափում, այլև գլոբալ ինտեգրացիոն գործընթացներում՝ արդեն համաշխարհային հանրության և միջազգային իրավունքի համակարգի գործառնավորման մասշտաբով:

Մարդու իրավունքների պաշտպանության հարցը իրավական համակարգի որակի, գործող պետականության գործառնական համարժեքության, մարդու՝ որպես բարձրագույն իշխանությունը կրողի իմանենտ իրավունքի սուբյեկտի հիմնարար, համալիր հավասարակշռության և իրավական քաղաքացիական հասարակության մակարդակի գնահատականի առումով համարվում է հիմնարար, եթե ոչ ամենակարևոր ասպեկտը:

Սա հիմնական մարտահրավերն է, որը ծառայած է ինչպես ակադեմիական իրավագիտության, այնպես էլ պրակտիկ իրավաբանության առջև, որն իրականացվում է օրենսդիր իշխանությունների կողմից օրինաստեղծության համակարգի բարեփոխումների և գործադիր իշխանությունների իրավակիրառ գործունեության մակարդակում:

Անկասկած, այս խնդրի լուծմանն ուղղված պարզեցված մոտեցումների մշակումը միաժամանակ մարտահրավեր է լիարժեք պետականության կառուցման և մարդու իրավունքների պաշտպանության (ինչպես առանձին վերցրած մարդու, այնպես էլ ամբողջությամբ ժողովրդի) ամենօրյա բարդ խնդիրների լուծման առումով, որոնք գլոբալ փոխկապվածության պայմաններում հակամարտությունների ձևով դրսևորվում են համաշխարհային հանրության սուբյեկտների ոչ համասեռության պատճառով:

Ուստի ինչպես մարդու իրավունքների բնույթը, այնպես էլ դրանց պաշտպանության կառուցակարգը ենթադրում են իրավական ինտեգրացիայի միջազգային գործակալի գործառույթը՝ հատկապես հաշվի առնելով պատմական զարգացման և նորագույն պատմության ընթացիկ պայմանների տարբեր մակարդակները, որում հայտնվեցին պետությունները, որոնք ինքնիշխան իրավունք ստացան ինտեգրվելու համաշխարհային հանրության մեջ, ինչպես նաև մշակելու, ձևավորելու և գործադրելու պետականության սկզբունքները:

Ասվածը կարելի է հիմնավորել տնտեսական և իրավական համակարգի զարգացածության բաժր մակարդակ ունեցող բազմաթիվ եվրոպական երկրների օրինակով: Խնդիրն այն է, որ բազմամշակութային մոդելի հասարակության ստեղծման տապալումը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներից փախստականների մեծ հոսքը լուրջ խնդիրներ առաջացրին այդ երկրներում մարդու իրավունքների պաշտպանության կտրվածքով: Մասնավորապես, հասարակության միատարրության խաթարման, համամարդկային արժեհամակարգի, կրոնի, բարոյականության, աշխարհայացքի, մշակույթի և մի շարք այլ հանգամանքների ոչ միանշանակ ընկալումն ու կիրառումը եվրոպական երկրներում հանգեցրին մարդու իրավունքների ոտնահար-

մանը և մարդու իրավունքների պաշտպանության համակարգի խաթարմանը: Արդյունքում մահմեդական ներգաղթյալների և բնիկ եվրոպացիների միջև ծագում են ամենօրյա բազմաթիվ հակամարտություններ, որոնց լուծումը կարծես թե հնարավոր չէ ապահովել եվրոպական գործող իրավական համակարգի և արդարության շրջանակներում: Խնդիրն այն է, որ եվրոպական իրավական համակարգը պատրաստ չէ կայծակնային արագությամբ ձևավորվող բազմամշակութային մոդելի հասարակությանը ապահովել այնպիսի համապարփակ իրավական կառուցակարգերով, որոնք ի գործու կլինեն բոլոր մարդկանց համար ապահովելու կյանքի, ազատության և երջանկության իրավունքի միանշանակ իրականացումը: Արդյունքում խիստ անարդյունավետ է դառնում այդ երկրներում օմբուդսմենի ինստիտուտի գործառնավորումը:

Այս հանգամանքները հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ծառայության հիմնական գործառնական ասեկտները պետք է լինեն.

- Մարդու իրավունքների սահմանադրաիրավական մոնիտորինգի ապահովման առանցքային գործառնական միավոր դառնալը, միջազգային պրոֆիլային ծառայությունների և կազմակերպությունների փոխգործակցության և փոխհամագործակցության շրջանակներում խնդիրների լուծումը, որի նպատակը մարդու իրավունքների միասնական միջազգային մոդելի ստեղծումն է:

- Մարդու իրավունքների միջազգային-իրավական կարգավորման ինտեգրման գործակալի գործառնությունը:

- Պետության կողմից մշակված՝ մարդու իրավունքների հայեցակարգի առկայությունը, ինչպես նաև Օմբուդսմենի ծառայության ունակությունն ու պարտականությունը՝ Հայաստանի Հանրապետությունում բոլոր հարակցվող գործառնական միավորների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքում:

Վերոհիշյալ ասպեկտները կյանքի կոչելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանի ծառայության ծրագրային բլոկը ներառում է հետևյալ ասպեկտները.

- Միջազգային սեմինարների, կլոր սեղանների, գիտաժողովների կամակերպումը՝ մարդու իրավունքների պաշտպանության և օմբուդսմենների ծառայություններին վերաբերող հարցերով:

- Մարդու իրավունքների պաշտպանության մեթոդաբանական և մեթոդական հարցերի և հանձնարարականների հարցերով որպես համակարգող կենտրոն հանդես գալը:

- Օրինաստեղծագործության ազգային համակարգի կայացման և կատարելագործման մեջ Մարդու իրավունքների իրավական բնույթի շեշտադրումը: Քաղաքացիների վերաբերյալ երկրի իրավական օրենսդրության կատարելագործումը:

Մարդու իրավունքների իրավական բնույթը պետք է ներկայացվի և բխի ազգային օրենսդրությունից՝ սահմանադրաիրավական կարգավորման շրջանակներում, և այն չի կարող լինել մարդու իրավունքների պաշտպանության որևէ առանձին ինստիտուտի բացառիկ լիազորությունը: Այլ կերպ ասած, Օմբուդսմենի ինստիտուտը օրինաստեղծ գործընթացում պետք է իրականացնի կատալիզատորի օժանդակ գործառնությամբ, սակայն չի կարող իրեն վերագրել խորհրդարանական գործառնություններ:

Մասնավորապես, հաշվի առնելով սահմանադրաիրավական փոփոխությունները, մարդու իրավունքների և մարդու իրավունքների պաշտպանության իրավական

մողելը կատարելագործվել է և Հիմնական օրենքի (հետագայում նաև սահմանադրական օրենքի) մակարդակում ներկայացվել է հետևյալ խմբագրությամբ.

«Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը»¹:

Նման մոտեցումը ստեղծում է մարդու իրավունքների և մարդու իրավունքների պաշտպանության նորմաստեղծագործության կատարելագործման որակապես նոր գործիքային մակարդակ՝ ուժեղացնելով սահմանադրաիրավական կարգավորման իրավական ծավալը ինչպես մարդու իրավունքների ծավալի, այնպես էլ դրանց պաշտպանության գործառնական և օպերացիոն կառուցակարգերի առումով (խորհրդարան, գործադիր իշխանություն, դատավարության իրավակիրառ համակարգ, հասարակական նախաձեռնություն, օմբուդսմեն և այլն)՝ վերջիններիս գործառույթների համարժեք բաշխմամբ և սինխրոնիզացմամբ, բացառելով դրանց կրկնօրինակումը:

Սա օմբուդսմենի ինստիտուտի՝ որպես իրավական կարգավորման համակարգի ներդաշնակակ բաղկացուցիչի, իրավական համալրման և նպատակահարմարության կենտրոնական ասպեկտն է, որը հնարավորություն է տալիս օմբուդսմենին իրականացնելու մարդու իրավունքների **իրավական ամբողջականության պատշաճ մոնիտորինգ**. Սա մարդու իրավունքների պաշտպանի գլխավոր խնդիրն է: Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանի առջև հատուկ խնդիր է դրված մշակելու մարդու իրավունքների և դրանց պաշտպանության շեղումներն ու խախտումները կանխարգելելու **պրեվենտիվ մողել** և **մոնիտորինգի կառուցակարգ**:

Առանց խնդրի նման դրվածքի մարդու իրավունքների պաշտպանության համակարգը կգտնվի մեկուսացված և ինքնապարփակված վիճակում:

Նման դրվածքի շրջանակներում կանխորոշվում են մարդու իրավունքների պաշտպանության համակարգի գործունեության գործառնական և ծրագրային հետևյալ ասպեկտները.

Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքացիների լուսավորում.

- Քաղաքացիական կոմպետենտության մակարդակի մոնիտորինգ:

- Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կոմպետենտության մակարդակի համակարգային բարձրացման ծրագիր:

Իրավական օրենսդրության կատարելագործում.

- Մարդու իրավունքների և մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական մոնիտորինգ:

- Սահմանադրական մոնիտորինգի արդյունքերով օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ:

Պետական կառույցների աշխատանքների նկատմամբ վերահսկողություն.

- Գործադիր իշխանության և մարդու իրավունքների և դրանց պաշտպանության իրավակիրառ համակարգի ունակության մոնիտորինգ:

¹ Տե՛ս 2015 թ. Դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 191 հոդվածը, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

○ Մոնիտորինգի արդյունքում հանձնարարականների և վերլուծական տեսակետների մշակում, որոնք ուղղված են պետական կառույցների աշխատանքների կատարելագործմանը և դրանց կողմից մարդու իրավունքների խախտումների բացառմանը:

Խախտված իրավունքների և արդարության վերականգնում.

○ Մարդու իրավունքների փաստացի խախտումների վերլուծություն՝ մոնիտորինգի վերոնշյալ բլոկների ձևաչափում՝ համակարգային մակարդակում դուրս բերելով այդ խախտումների ծագման և վերացման պատճառահետևանքային մեխանիզմները:

○ Առնչվող մարմինների հետ գործողությունների համաձայնեցված պլան՝ ուղղված իրավակիրառ և հարկադրանքի կիրառման համակարգերի կողմից խախտումների օպերացիոն վերացմանը:

Օմբուդսմենի ծառայության աշխատանքում նոր մոտեցումը այն է. համակարգի ամբողջ իրավական դաշտը, որի կենտրոնում բացառապես մարդն է: Այս առումով կենտրոնական առաջնահերթությունը անպատճառ դարձյալ մարդն է, և մարդու իրավունքների բոլոր խախտումները պետք է օպերատիվորեն և լիարժեքորեն գտնեն իրենց լուծումները առանց օմբուդսմենի ծառայության կողմից պետական կառույցների դեմ պատերազմ սանձագերծելու: Այսինքն, աշխատանքի սկզբունքն է՝ ոչ միայնակ և ոչ ընդդեմ համակարգին, այլ համակարգի հետ՝ ընդդեմ մարդու իրավունքների ոտնահարումներին: Այս մոտեցումը ենթադրում է, որ օմբուդսմենը պետք է համակարգի մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող պետական բոլոր մարմինների գործառույթները՝ սերտ համագործակցելով վերջիններիս հետ: Եվս մեկ անգամ նշենք, որ կենտրոնական օբյեկտը համարվում է մարդը, քաղաքացին, քաղաքացիական հասարակության անդամը, բարձրագույն իշխանության կամահայտնության իմանենտ սահմանադրական իրավունքի կրողը: Այսինքն՝ Մարդ...Մարդ...Մարդ...:

Այս պարագայում օմբուդսմենի հետ աշխատանքը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության իրավական կարգավորման համակարգային ապահովում, այլ ոչ թե մասնավոր իրավական խախտումների սպասարկման կենտրոն, որի ձևաչափում հաճախորդը գալիս է օմբուդսմենի գրասենյակ իր հարցերի լուծման կապակցությամբ բանակցություններ վարելու: Օմբուդսմենի ինստիտուտը չի կարող լինել հասարակական հիմունքներով աշխատող փաստաբանական գրասենյակ: Օմբուդսմենի ինստիտուտը, լինելով սահմանադրական օբյեկտ, պետք է դիտարկվի որպես իրավական համակարգի մաս:

ОСНОВНЫЕ ТЕЗИСЫ ПРОГРАММЫ ФОРМИРОВАНИЯ И СТАНОВЛЕНИЯ СИСТЕМЫ ПРАВ ЧЕЛОВЕКА РА

Вардан Аивазян

*Доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук*

Данная аналитическая статья предназначается для выделения основных тезисов выявляющих феноменологию, функциональное предназначение и механизм функционирования Омбудсмена.

Это очень важно для полноценного понимания проблемной области Прав Человека Республики Армения в едином объективном формате вне ограничений субъективного представления сопряженных лиц принятию решений по вопросу Омбудсмена.

Также предлагается подход и основные контуры концепции формирования и становления института Прав Человека Республики Армения как составной части правовой системы РА.

THE BASIC THESES OF THE PROGRAM OF FORMATION AND ESTABLISHMENT OF THE HUMAN RIGHTS SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

Vardan Ayvazyan

*Docent of the YSU Chair of Constitutional Law,
Candidat of Legal Sciences*

Current analyses is aimed to highlight the basic theses of the phenomenology, functional purpose and working mechanisms of the Ombudsman. This is a very important issue in an attempt to thoroughly understand the problematic area of the RA Human Rights in a single objective format, without any restrictions from the subjective vision of the adjacent agents towards the decision-making of the Ombudsman. Basic outlines of the concept of formation and establishment of the RA Human Rights Institute, as a consistent part of the Legal System of RA.

Բանալի բառեր – Մարդու իրավունքներ, մարդու իրավունքների համակարգ, մարդու իրավունքների պաշտպանություն, պաշտոնատար անձ, օմբուդսմեն, մոնիտորինգ, հայեցակարգային մոդել, համակարգային մոտեցում

Ключевые слова – Права человека, система прав человека, защита прав человека, должностное лицо, омбудсмен, мониторинг, концептуальный модель, системный подход

Key words – Human Rights, Human Rights System, Defense of Human Rights, Public Officer, Ombudsman, Monitoring, Conceptual Model, Systemic Approach